



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Օ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/31566-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-173-04.06.2019-ՊԱ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը:

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 847 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷՂՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ԿԱՄ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐՈՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԾԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-173-04.06.2019-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ հարկ է համարում տեղեկացնել, որ Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից մշակվել և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 15-ի նիստում հավանության է արժանացել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը, որն օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով՝ քննարկման (Կ-169-03.06.2019-ՊԱ-011/0): Նշված օրենքների նախագծերի փաթեթով արդեն իսկ նախատեսվել են էլեկտրամոբիլին առնչվող իրավակարգավորումներ, մասնավորապես, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածով «ավտոմոբիլ» հասկացության մեջ ներառվել է էլեկտրամոբիլը, ինչպես նաև սահմանվել է «էլեկտրամոբիլ» հասկացությունը:

Ելնելով շարադրվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ձեռնպահ մնալ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ներկայացրած օրենսդրական նախաձեռնության քննարկումից և դրա դրույթներին անդրադառնալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի քննարկումների շրջանակներում:



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունիսի 2019 թվականի N 847 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ  
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի տեղակալ Հովհաննես Քոչարյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը (Պ-173-04.06.2019-ՊԱ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից գեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հունիսի 28  
Երևան



ՆԱԽԱԳԻԾ

Պ-173-04.06.2019-ՊԱ-011/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում՝ «մեխանիկական տրանսպորտային միջոց» հասկացությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«մեխանիկական տրանսպորտային միջոց՝ շարժիչով շարժման մեջ դրվող տրանսպորտային միջոց, ներառյալ՝ տրակտորները, ինքնագնաց մեքենաները եւ մեխանիզմները (բացի այն տրանսպորտային միջոցներից, որոնց շարժիչի աշխատանքային ծավալը չի գերազանցում 50 խորանարդ սանտիմետրը), ինչպես նաեւ տրոլեյբուսները եւ էլեկտրամոբիլները.»

**Հոդված 2.** Օրենքի 2-րդ հոդվածը լրացնել նոր հասկացությունով.

«էլեկտրամոբիլ՝ էլեկտրաէներգիայի ինքնուրույն աղբյուրից սնուցվող, բացառապես էլեկտրաշարժիչներով շարժման մեջ դրվող ավտոմոբիլ(բացառությամբ տրոլեյբուսի եւ տրամվայի).»

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

*ՆԱԽԱԳԻԾ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ԱՎՏՈՄՈՐԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-233-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածը լրացնել նոր հասկացությունով.

«էլեկտրամոբիլ՝ էլեկտրաէներգիայի ինքնուրույն աղբյուրից սնուցվող, բացառապես էլեկտրաշարժիչներով շարժման մեջ դրվող ավտոմոբիլ (բացառությամբ տրոլեյբուսի եւ տրամվայի).»

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը::

ՆԱԽԱԳԻԾ

Պ-173<sup>2</sup>-04.06.2019-ՊԱ-011/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ԿԱՄ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐՈՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ  
ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-238-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասում՝

1) «տրանսպորտային միջոց» բառերից հետո լրացնել «ինչպես նաեւ էլեկտրամոբիլներով» բառերը.

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ  
ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,**

**«ԱՎՏՈՍՈՐԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ԿԱՄ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐՈՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

**1. Ընթացիկ վիճակը եւ առկա խնդիրները**

Համաշխարհային ավտոմոբիլաշինությունում ներքին այրման շարժիչով աշխատող ավտոմոբիլներից այլընտրանքային վառելիքով աշխատող ավտոմոբիլներին՝ մասնավորապես արագ տեմպերով էլեկտրոմոբիլներին անցումը, անհրաժեշտություն է առաջացրել հաշվի առնելով նման տրանսպորտային միջոցների շահագործման եւ սպասարկման առանձնահատկությունները, պահանջները կատարել համապատասխան օրենսդրական կարգավորումներ, որոնք կօգնեն դրանց վարորդներին ավելի հեշտ իրականացնել դրանց սպասարկումը, կողմնորոշվել ավտոճանապարհներին ու կխթանեն էկոլոգիապես մաքուր այս տրանսպորտի տարածմանը Հայաստանի Հանրապետությունում:

Օրենսդրությունում «էլեկտրամոբիլ» հասկացության բացակայության պատճառով դրանց հետ փաստացի առնչվող մարմինները, կազմակերպություններ եւ անձինք ստիպված են լինում գտնել այլընտրանքային ու իրարից տարբերվող ձեւակերպումներ, ինչը կարող է հետագայում լրացուցիչ խնդիրներ առաջացնել օրենսդրության միատեսակ կիրառման հետ կապված: Ավելին, հասկացության բացակայությունը արգելակում է ոլորտի օրենսդրության զարգացումը:

Օրենսդրական կարգավորումների բացակայությունը բերում է դաշտում իրավական անորոշության եւ տեխնիկական բարդությունների, ինչը չի խթանում պոտենցիալ հնարավորություններ ունեցող սուբյեկտների կողմից դրանց ձեռքբերմանը: Այս իրավիճակը չի նպաստում առկա արտոնությունների լիարժեք կիրառմանը, մասնավորապես ՀՀ կառավարության 17 հունվարի 2019 թվականի N 13-Ա որոշմամբ հավանություն է տրվել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը, որը սահմանված կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

Ի դեպ Հայաստանի Հանրապետությունում էլոկտրամոբիլների մասով առկա են նաեւ հետեւյալ արտոնությունները՝

ՀՀ հարկային օրենսգրքի 172-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հիբրիդային եւ էլեկտրականությամբ սնուցվող շարժիչներով աշխատող ավտոտրանսպորտային միջոցների համար բնապահպանական հարկ վճարողները, այդ ավտոտրանսպորտային միջոցների մասով, ազատվում են մթնոլորտային օդ վնասակար նյութեր արտանետելու համար բնապահպանական հարկից:

Ավտոկայանատեղի համար սահմանված տեղական վճարի գծով Երեւան քաղաքի ավագանու 2017 թվականի փետրվարի 14-ի N 675-Ն որոշմամբ՝ որպես վառելիք բացառապես էլեկտրաէներգիա օգտագործող եւ բացառապես էլեկտրական շարժիչով աշխատող ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերին տրամադրվել է արտոնություն՝ ազատելով ավտոկայանատեղի համար սահմանված տեղական վճարից: Արտոնությունը օրենսդրության սահմանված կարգով Երեւան քաղաքի ավագանու որոշումներով երկարաձգվում է յուրաքանչյուր օրացույցային տարվա համար(2017 թվականի դեկտեմբերի 26-ի N 90 Ն որոշմամբ 2018թ. համար եւ 2018թ-ի N 44 որոշմամբ 2019 թ-ի համար ):

ՀՀ Ճանապարհային ոստիկանության էլեկտրոնային ռեգիստրում 2019թ-ի փետրվար ամսվա դրությամբ էլեկտրամոբիլների թիվը 18-ն է, ինչը անթույլատրելի փոքր քանակ է:

Դեռեւս 2017թ-ից ՀՀ ճանապարհային ոստիկանության կողմից մշակվում է նախագծերի փաթեթ, որը նախատեսում է ծավալուն բարեփոխումներ ճանապարհային երթեւեկության կազմակերպման եւ անվտանգության ապահովման բնագավառում, որում նախատեսված է «Էլեկտրամոբիլի» հասկացության ներդրումը, սակայն ծավալի հետ կապված նախագծերի այդ փաթեթի փաստացի ընդունման ժամկետն անորոշ է, մինչդեռ նախատեսված արտոնությունները նախատեսված են որոշակի ժամկետներով:

## **2. Առաջարկվող կարգավորման բնույթը**

Առաջարկվում է օրենքում խմբագրել մեխանիկական տրանսպորտային միջոց հասկացությունը եւ լրացնել նոր՝ էլեկտրամոբիլ հասկացությամբ, դրանց ձեւակերպումների հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանության» ծառայության դիրքորոշումները:

## **3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները եւ անձինք**

Նախագիծը մշակվել է «Հայ-ամերիկյան բարեկամություն» հասարակական կազմակերպության հետ համատեղ՝ «Կանաչ ենթակառուցվածքներ» ծրագրի շրջանակներում :

## **4. Ակնկալվող արդյունքը**

Առաջարկվող փոփոխությունը եւ լրացումը՝

Կապահովի օրենսդրությունում էլեկտրամոբիլի հասկացության միատեսակ կիրառումը.

- Սկիզբ կդնի էլեկտրամոբիլների հետ կապված օրենսդրական կարգավորումներին հետագա զարգացմանը.
- կնպաստի էլեկտրամոբիլների համար նախատեսված արտոնությունների առավելագույն կիրառմանը.
- կխթանի Հայաստանի Հանրապետությունում էլեկտրամոբիլների տարածմանը, ինչը իր հերթին կբերի՝ ներկրվող շարժիչային վառելիքներից կախվածության նվազեցման, տրանսպորտային ծախսերի նվազեցման եւ ուղղակի էներգախնայողության շնորհիվ էլեկտրամոբիլներին բնորոշ առավել արդյունավետ վառելիք-անվավազք էներգիայի փոխակերպման, անուղղակի էներգախնայողության շնորհիվ ՀՀ ողջ էներգահամակարգի սեզոնային բեռի գրաֆիկի համահարթեցման եւ բազային բեռի էլեկտրակայանների աշխատանքի արդյունավետության բարձրացման (սեզոնային հարթեցման էֆեկտ): Իսկ երկարաժամկետում՝ էլեկտրամոբիլների լայն տարածման շնորհիվ պետական եւ համայնքային միջոցների խնայողության ջերմոցային գազերի եւ վնասակար գազերի արտանետման նվազեցմանը ուղղված ծախսերի կրճատման հաշվին, մաքուր («կանաչ») տեխնոլոգիաների տարածման, ջերմոցային գազերի եւ վնասակար արտանետումների նվազեցման, ինչպես նաեւ շրջակա միջավայրի եւ մարդու առողջության վրա տեխնաձին ազդեցության նվազման: